Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-433[1]-18.11.2022-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նույնականացման քարտերի մասին» 2011 թվականի նոյեմբերի 30-ի ՀՕ-286-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) տվյալների էլեկտրոնային պահոց՝ քաղաքացու էլեկտրոնային նույնականացման տվյալներ պարունակող տեխնիկական մաս, որի բնութագիրը սահմանվում է ՀՀ կառավարության որոշմամբ:»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Նույնականացման քարտը ներառում է տեխնիկական մաս՝ տվյալների էլեկտրոնային պահոց:»:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում «2022 թվականի դեկտեմբերի 31» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «2023 թվականի դեկտեմբերի 31» բառերով և համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ խմբագրությամբ.

«Սույն մասի դրույթները տարածվում են տվյալների էլեկտրոնային պահոց ունեցող նույնականացման քարտերի վրա:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի դեկտեմբերի 30-ից: 2023 թվականի փետրվարի 15-ից մինչև սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ՀՀ կառավարության որոշման ընդունումը նույնականացման քարտերը տրամադրվելու են առանց տվյալների էլեկտրոնային պահոցի:

Մինչ այդ տրված նույնականացման քարտերը վավեր են, բացառությամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերի: